«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ «ՎԹԱՐԱՅԻՆ ՀԱԿԱԶԴՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ԳՀԾՁԲ-4/21-03/05

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК»
(ԳԲԲ) 03/05 (ОЗП)
Գնման ընթացակարգերի բաժին
Отдел закупочных процедур
«16» 02 - 2021թ.
«____» _____ 20__ թ

ք.Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Էդուարդ Մարտիրոսյանի, որը գործում է «ՀԱԷԿ» ՓԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

«Ատոմսերվիս» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Հրաթև Հովհաննիսյանի, որը գործում է «Ատոմսերվիս» ԲԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **«Վթարային հակազդման համակարգի անձնակազմի ուսումնական փաստաթղթերի մշակման»** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **8640000 (ութ միլիոն վեց հարյուր քառասուն հազար)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ-ն՝ 1440000** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին 30 օրացուցային օրվա ընթացքում (ներառյալ վաղաժամկետ մատակարարման դեպքերը):

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**«ԱՏՈՄՍԵՐՎԻՍ» ԲԲԸ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,
Հ/Հ 1930000199200100	**Հ/Հ** 012544 80010
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	«Հորիզոն Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,
ՀՎՀՀ 04401874,	**ՀՎՀՀ** 04402602,
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	
Հեռ.՝ 20-04-91, 33-40	**Հեռ.՝** 091403475
E-mail: anpp@anpp.am	**E-mail**: atomserviseojs@gmail.com

Է. Մարտիրոսյան
Կ.Տ

Հ. Հովհաննիսյան
Կ.Տ

Հավելված N 1
«16» 02 2021թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՃՊՀԲ-4/21-03/05 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
չ/հ	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը/ ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը
1	92311180	«ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի անձնակազմի ուսումնական փաստաթղթերի մշակում. Մշակման (Կազմման) ենթակա փաստաթղթերի ցանկ՝ բաղկացած թվով 3 կուրսից (9 թեմա, 9 պլան) ինչպես նաև կատարման ժամկետները և ծառայության մատուցման այլ պայմաններ ներկայացված են կից Հավելված 1.1-ով: Կատարողը որևէ մեկ կամ մի քանի կուրս, թեմա կամ պլան մշակելուց հետո թղթային տարբերակով ներկայացնում է Պատվիրատուի ստուգմանը: Ստուգման արդյունքում Պատվիրատուի կողմից հայտնաբերված թերությունները ուղղելուց հետո վերջնական տարբերակը ներկայացնում է հաստատման: Փաստաթղթերը պետք է կազմված լինեն. - Հայերեն կամ ռուսերեն լեզվով, - Նվազագույնը երկու օրինակից, - Ա4 ձևաչափով (այլ ձևաչափով կարող են ներկայացվել սխեմաները, նկարները քարտեզները): Կատարողը պետք է տրամադրի նաև փաստաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ - ppt ընդլայնումով (Microsoft Power Point) ֆայլերի տարբերակով՝ թեմաները doc ընդլայնումով (Microsoft Word) ֆայլերի տարբերակով՝ պլանները:	դրամ	**8640000**	1	ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսված **6** /վեց/ ամիս

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Կ.Տ
.....Է. Մարտիրոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՏՈՄՍԵՐՎԻՍ» ԲԲԸ

Կ.Տ
.....Հ. Հովհաննիսյան

Հավելված N 1.1
« 16 » 02. 2021թ. կնքված
ՀԱԷԿ-ԳԾՊՁԲ-4/21-03/05 ծածկագրով պայմանագրի

«ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի անձնակազմի ուսումնական փաստաթղթերի մշակման ծավալները և կատարման ժամկետներ (պլան-գրաֆիկ)

h/h	անվանումը	Չափի միավորը	Քանակը	Կատարման ժամկետը T_0
1.	**Դասընթաց՝ Միջուկային և ճառագայթային վթարների դեպքում արձագանքման միջոցառումների մշակման մեթոդներ**	լրակազմ	1	6 ամիս
	⇒ Թեմա՝ Վթարային պատրաստվածության և հակազդման նպատակները	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Ընդհանուր և ենթակառուցվածքային պահանջներ	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Ֆունկցիոնալ պահանջներ	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
2.	**Դասընթաց՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի անձնակազմի աշխատանքների կազմակերպումը**	լրակազմ	1	6 ամիս
	⇒ Թեմա՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի կազմակերպչական կառուցվածքը	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Արտակարգ իրավիճակների հանձնաժողովի և վթարային հակազդման համակարգի ղեկավար կազմի հիմնական խնդիրները և գործառույթները	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Վթարային պատրաստվածության և արձագանքման ուղղությամբ վթարային հակազդման համակարգի կազմավորումների և ստորաբաժանումների անձնակազմի հիմնական խնդիրները և գործառույթները	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
3.	**Դասընթաց՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի փաստաթղթերը**	լրակազմ	1	6 ամիս
	⇒ Թեմա՝ Վթարային հակազդման համակարգի վարչա-տեխնիկական փաստաթղթերը	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Վթարային հակազդման համակարգի ղեկավար կազմի վթարային գործողությունների քարտեր /ձեռնարկվող միջոցների ուղեցույց/	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	
	⇒ Թեմա՝ Միջուկային և /կամ ճառագայթային վթարների հակազդման «ՀԱԷԿ» ՓԲԸ պլանը	հատ	1	
	⇒ Դասարանային պարապմունքի պլան	հատ	1	

Փաստաթղթերի մշակումը, ստուգման և հաստատման գործընթացը պետք է իրականացվի «ՀԱԷԿ» ՓԲԸ, ԱԷՄԳ, ՇԿՀԱ ներքոհիշյալփաստաթղթերի պահանջների համապատասխան.

1. Ձեռնարկ՝ «ՀԱԷԿ-ում կիրառվող փաստաթղթերի դասակարգման կառուցվածքը և նույնականացման համակարգը» ՈՒ.ԱԳ.08.ՕԻՊ-001.
2. Ձեռնարկ՝ «Վարչա-տեխնիկական և շահագործման-տեխնիկական փաստաթղթերի ձևավորմանը և ձևակերպմանը ներկայացվող պահանջները» ՈՒ.ԱԳ.08.ՕԻՊ-002.
3. Ձեռնարկ՝ «Փաստաթղթերի համապատասխանության ստուգումը» ՈՒ.ԱԳ.08-ՕԻՊ-012
4. Ձեռնարկ՝ «Տիպային ուսուցման ծրագրի կառուցվածքը և բովանդակությունը» ՖԴ.ԱԳ.08.ՈՒԳՊ-001.
5. Ձեռնարկ՝ «Ուսուցանվողների ուսումնական ձեռնարկների կառուցվածքը և բովանդակությունը ՖԴ.ԱԳ.08.ՈՒԳՊ-002
6. Ընթացակարգ՝ "Դասարանային պարապմունքի պլան" ՐՊ.ՈՒՄԴ.11.ՈՒԳՊ-005
7. Ուսումնական ձեռնարկ «Համակարգված մոտեցում ուսուցմանը» ՐՊ.ՈՒՄԴ.55.ՈՒԳՊ-001
8. Հրահանգ՝ «Ստուգիչ և թեսթային հարցերիմ շակումը» ՐՊ.ՈՒՄԴ.12.ՈՒԳՊ-008
9. Ընթացակարգ՝ «Ուսուցման նպատակների մշակումը» ՐՊ.ՈՒՄԴ.11.ՈՒԳՊ-004.
10. Ընթացակարգ՝ «Նախապատրաստման ծրագրի պլանի մշակում» ՐՊ.ՈՒՄԴ.11.ՈՒԳՊ-007

11. Կանոնակարգ «Գիտելիքների մուտքային /ելքային ստուգման անցկացում» РП.УМД.09.УТП-002
12. Անվտանգության ընդհանուր պահանջներ GSR-Part 7 “Միջուկային և ճառագայթային վթարային իրավիճակների դեպքում պատրաստվածություն և հակազդում», ԱԷՄԳ
13. Միջուկային և ճառագայթային վթարային իրավիճակների հակազդման միջոցառումների մշակման մեթոդներ EPR-Методика МАГАТЭ
14. Ձեռնարկ՝ «Վթարային պատրաստվածության անձնակազմի ուսուցումը և ատեստավորումը» GL 13-2012, ՇԿՀԱ-ՄԿ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ «ՀԱԷԿ» ՓԲԸ	ԿԱՏԱՐՈՂ «ԱՏՈՄՍԵՐՎԻՍ» ԲԲԸ
.....Է. Մարտիրոսյան Կ.Տ	.....Հ. Հովհաննիսյան Կ.Տ

Հավելված N 2
«16» 02. 2021թ. կնքված
ՀԱԷԿ-ԳՃՊՁԲ-4/21-03/05 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀդրամ

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92311180	«ՀԱԷԿ» ՓԲԸ վթարային հակազդման համակարգի անձնակազմի ուսումնական փաստաթղթերի մշակում							8640000	8640000	8640000	8640000	8640000	8640000	8640000

Վճարումը կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության և գործուղման թերթիկների հիման վրա,Կատարողի կողմից հաստատվելուց հետո (այդ թվում վաղաժամկետ մատուցված ծառայությունների դեպքում) 30 օրացուցային օրվա ընթացքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Կ.Տ ..... Է. Մարտիրոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՏՈՄՍԵՐՎԻՍ» ԲԲԸ

Կ.Տ ..... Հ. Հովհաննիսյան